ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՂՆՋԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
2013-2016ԹԹ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար Ա. Գաբրիելյանը

Քննարկվել է համայնքի անվանգանու թիվ 9 նիստում

2012Թ

Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Գյուղը գտնվում է պատմական Հայաստանի Սյունաց աշխարհի Վայոց Ձոր գավառում: Սահմանակից է Թառաքումբ, Քարագլուխ գյուղերին և Գեղարքունիքի մարզին: Ծովի մակարդակից միջին բարձրությունը 1640մ. է, կլիման չոր է, տեղումների քանակը 300-350մմ է:

Գյուղն ունի խաչքարեր, որոնք կերտվել են միջին դարերում և երկու քարավանատուն, որոնք կառուցվել են 13-րդ դարում:

Ժողովրդագրություն

Գյուղում բնակիչների թվաքանակը կազմում է 497 մարդ, որից ըստ տարիքի

1. Երեխաներ (0-7) - 39
2. 8-15 տարեկան - 41
3. 16-62 տարեկան - 333
4. 63 –ից բարձր - 84
5. աշխատունակներ - 258

Գյուղն ունի 16 տնտեսություն, որոնք ընդգրկված են «փարոս» համակարգում:

Տեղական ինքնակառավարման մարմինները

Գյուղը ղեկավարվում է համայնքի ղեկավարի կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ:

Համայնքի ղեկավարը ստեղծում է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով

1. Աշխատակազմի քարտուղար 1- դրույք
2. Առաջատար մասնագետ 1 դրույք
3. Առաջատար մասնագետ 1 դրույք

Համայնքի ենթակառույցներն են՝

<u>Մշակույթի տուն</u>

ակումբավար -1

գեղմասվար -1

<u>Գրադարան</u>

Գրադարանավար -1

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը՝

1. Մշակույթի տուն -1
2. Գրադարան -1
3. Վարչական շենք -1
4. Խմելու ջրի ցանց – 12կմ.

Վարչական շենքի վիճակը վթարային է կառուցված է անցած դարի 30-60 ական թվականներին:

Խմելու ջրի արտաքին ցանցը նոր է կառուցված: Ներքին ցանցը վթարային է, որի հետևանքով կեղտաջրերը հաճախ են ներթափանցում ցանց:

Փողոցները մասնակիորեն ասֆալտապատ չեն, մայրուղին անցնում է գյուղի միջով, ազգաբնակչության անվտանգությունը ապահովելու համար խիստ կարիք կա գյուղամիջյան հատվածում ամբողջությամբ մայթ կառուցել:

Շրջակա միջավայրի պաշտպանությունը

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով: Նախատեսվում է կատարել աղբահանություն համայնքի միջոցներով:

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա առանձնատուն մակերեսով:

Բնակարանով անապահով ընտանիքների թիվը 20-ից ավելի է:

Հողատարածքի օգտագործում

1. Հանայնքի վարչական տարածքը – 3279.54
2. Վարելահողեր – 150.49
3. Խոտհարք – 175.90
4. արոտավայրեր – 1522.88
5. Դաշտային ճանապարհներ –
6. Գերեզմանոց – 1.4 հա
7. Տնամերձ հողեր -42.66
8. Դպրոց -1
9. Հուշարձան -1
10. Գյուղամիջյան ճանապարհներ – 12կմ
11. Մեկ հողաբաժնի չափը -1.6 հա

Գյուղատնտեսությունը

Հիմանականում զբաղվում են պտղաբուծությամբ, բանջարբոստանային կուլտուրաների մշակությամբ(հիմնականում կարտոֆիլ) , անասնապահությամբ:

Մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն

Համայնքն ունի մեկ մշակույթի տուն, գրադարան որը գտնվում է վթարային վիճակում:

Առողջապահություն

Գյուղն ունի մեկ բուժկետ, սպասարկում է մեկ բուժքույր:

Ռազմավարությունը

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ բնակավայր:

Հիմնական նպատակները

1. Զարգացնել գյուղատնտեսությունը և անասնապահությունը:
2. Համայնքն ապահովել մշտական խմելու ջրով:
3. Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը:
4. Ստեղծել հանգստի և տուրիզմի գոտիներ:

ԾՐԱԳԻՐ N 1

Ոռոգման ջրատարի կառուցում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ոռոգման ջրատարն ունի հողային հուն, հետևաբար կան ջրի մեծ կորուստներ, մոտավորապես դա կազմում է 50-60% : Այդ պատճառով ոռոգման ամենաակտիվ սեզոնին առաջանում են լուրջ խնդիրներ հողակտորները ջրով ապահովելու հարցում: Ջրատարի կառուցումը հնարավորություն կտա նոր տնկարկներ հիմնելու և 20 հա խնձորենիներին փրկելու չորացումից:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- հիմնախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար
- ապահովել համայնքի ներդրումը
- կազմել ծրագիր նախագծա - նախահաշվային փաստաթղթերը
- 2013թ իրականացնել շինարարական աշխատանքներ: Հողային աշխատանքներ 4.5 կմ. երակարությամբ, 200-250մմ. տրամաչափի խողովակաշարի կառուցում և փականային համակարգի տեղադրում:

Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 15 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ N 2

Խմելու ջրի ներքին ցանցի կառուցում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Խմելու ջրի ներքին ցանցը կառուցվել է 1970թ.: Այսօր վերանորոգվել է նրա մեկ- երրորդը, մնացած մասը գտնվում է վթարային վիճակում, որը հնարավորություն չի տալիս բնակչությանը ապահովել խմելու ջրով: Կորուստները կազմում են 40-50%:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- հիմնախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար.
- ապահովել համայնքի ներդրումը
- կազմել ծրագրի նախագծա - նախահաշվային փաստաթղթերը
- 2014 թ. իրականացնել շինարարական աշխատանքեր՝ խողովակների ձեռք բերում D = 50 մմ, 2.0 կմ, հողային աշխատանքեր, խողովակաշարի կառուցում, ջրահավաք կապտաժային համակարգի կառուցում:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 11.680 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ N 2

Խմելու ջրի ներքին ցանցի կառուցում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Խմելու ջրի ներքին ցանցը կառուցվել է 1970թ.: Այսօր վերանորոգվել է նրա մեկ- երրորդը, մնացած մասը գտնվում է վթարային վիճակում, որը հնարավորություն չի տալիս բնակչությանը ապահովել խմելու ջրով: Կորուստները կազմում են 40-50%:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- հիմնախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար.
- ապահովել համայնքի ներդրումը
- կազմել ծրագրի նախագծա - նախահաշվային փաստաթղթերը
- 2014 թ. իրականացնել շինարարական աշխատանքեր՝ խողովակների ձեռք բերում D = 50 մմ, 2.0 կմ, հողային աշխատանքեր, խողովակաշարի կառուցում, ջրահավաք կապտաժային համակարգի կառուցում:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 11.680 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ N 3

Ոռոգման պոմպակայանի կառուցում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Գյուղի « Ղռեր» կոչվող տարածքը (20հա) ինքնահոս ոռոգման ջրով ապահովելու հնարավորություն չլինելու պատճառով խնդիր է առաջացել այն ոռոգելի դարձնել մեխանիկական եղանակով: Նշենք նաև, որ տարածքը նպատակահարմար է ծիրանի, դեղձի, խաղողի այգիների հիմնադրման համար:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- հիմախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար.
- Ապահովել համայնքի ներդրումը
- Կազմել ծրագրի նախագծա - նախահաշվային փաստաթղթերը
- 2015թ. իրականացնել շինարարական աշխատանքներ:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Պրմպակայանի տեղադրում (150մմ) տրամաչափի խողովակաշարի կառուցում՝ 500 գծմ. Փականային համակարգի տեղադրում:

Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 16.760մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ N 5

Գյուղամիջյան ճանապարհի բարեկարգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Գյուղամիջյան առանձին փողոցներ, գտնվելով անմխիթար վիճակում բարդություններ են առաջացնում երթևեկության համար, որոշ հատվածներ դառնում են անանցանելի, ամռան ամիսներին խիստ վատանում է սանիտարահիգենիկ վիճակը:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- հիմնախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար
- ապահովել հայմայնքի ներդրումը
- կազմել ծրագրի նախագծա - նախահաշվային փաստաթղթերը
- 2016թ. իրականացնել շինարարական աշխատանքներ:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Շինարարական աշխատանքեր

Փողոցների հարթեցում, խճապատում 7200քմ, 250մմ ջրահեռացման խողովակների տեղադրում,1000 քմ ասֆալտապատում

Ծրագրի նախնական հաշվային արժեքը կազմում է 62 մլն դրամ:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Վայոց Ձոր մարզի Աղնջաձոր համայնքում ունի հետևյալ պատկերը:

	Եկամուտների տեսակը	2012թ. Փաստ.	2013թ. Նախա-տեսված	2014թ. Կանխա-տեսված	2015թ. Կանխա-տեսված	2016թ. Կանխա-տեսված
	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ		7541			
Ա	Հարկային եկամուտներ		1234			
1.	Հողի հարկ		841			
2.	Գույքահարկ		393			
3.	Եկամտահարկ		-			
4.	Այլ հարկ եկամուտներ		-			
Բ.	ՏՈՒՐՔԵՐ		41			
1.	Պետական տուրքեր		-			
2.	Տեղական տուրքեր		41			
Գ.	Ոչ հարկային եկամուտներ		250			
1.	վարձավճար		234			
2.	Գույքի վարձավճար		16			
3.	Տեղական վճարներ		-			
4.	Այլ ոչ հարկ. Եկամուտ.		-			
Դ.	Պաշտոնական Տրանս-ֆերտներ, դոտացիա		6016			
Ե.	Եկամուտի կապիտալ գործարքներից		-			
Զ.	Տարեսկզբի ազատ մնացորդ		2200			